



COVID-19-ի դեմ պատվաստանյութեր. հաճախակի տրվող հարցեր ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՂՄԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որո՞նք են COVID-19-ի դեմ պատվաստանյութերի տարածված կողմնակի ազդեցությունները

- COVID-19-ի դեմ պատվաստվելուց հետո տարածված կողմնակի ազդեցությունները ներառում են՝
- Ցավ, կարմրություն կամ այտուց թևի ներարկման հատվածում (կամ ազդրի՝ երեխաների դեպքում)
 - Ջերմություն, դող
 - Գլխացավ
 - Հոգնածության զգացողություն
 - Անհանգստություն կամ լաց (փոքր երեխաներ)
 - Մկանների ցավ կամ հոդացավ
 - Այտուցված ավշային հանգույցներ
 - Սրտխառնոց, ախորժակի կորուստ

Այս կողմնակի ազդեցությունները կարող են սահմանափակել ամենօրյա գործողություններ կատարելու ձեր հնարավորությունը, սակայն դրանք պետք է անհետանան մեկ-երկու օրվա ընթացքում: Մարդկանց մեծ մասը ունենում է միայն մեղմ կողմնակի ազդեցություններ, իսկ որոշ մարդիկ ընդհանրապես կողմնակի ազդեցություններ չեն ունենում:

Այս կողմնակի ազդեցությունները բնական են և նշան են, որ պատվաստանյութը գործում է: Դրանք ցույց են տալիս, որ ձեր մարմինը սովորում է պայթարել վիրուսի դեմ և ստեղծում է անվարակունակություն (immunity): Եթե ձեզ պատվաստանյութեր տրամադրողը կամ ձեր բժիշկը ձեզ չեն կարգադրել չպատվաստվել, կարևոր է ստանալ բոլոր առաջարկվող դեղաչափերը, անգամ եթե կողմնակի ազդեցություններ եք ունեցել նախորդ դեղաչափի ընդունումից հետո:

Տե՛ս CDC-ի՝ [Հնարավոր կողմնակի ազդեցություններ՝ COVID-19-ի դեմ պատվաստվելուց հետո:](#)

Ի՞նչ է դա նշանակում, եթե ես չեմ ունեցել որևէ կողմնակի ազդեցություն COVID-19-ի պատվաստանյութ ստանալուց հետո

COVID-19-ի դեմ պատվաստմանը հաջորդող ազդեցությունները կարող են տարբեր լինել տարբեր մարդկանց մոտ: COVID-19-ի դեմ պատվաստանյութերի կլինիկական փորձարկումների ժամանակ մարդկանց մեծ մասն ունեցել է միայն թեթև կողմնակի ազդեցություններ, և նրանցից ոմանք ընդհանրապես կողմնակի ազդեցություններ չեն ունեցել: Այդ մարդիկ այնուամենայնիվ ունեցել են [ուժեղ իմունային արձագանք](#) պատվաստանյութից: Պատվաստումը պաշտպանում է ձեզ COVID-19-ով ծանր հիվանդանալուց՝ անկախ նրանից՝ պատվաստումից հետո կողմնակի ազդեցություններ ունենում եք, թե ոչ:

Արյո՞ք կան COVID-19-ի դեմ պատվաստմանը հաջորդող լուրջ կողմնակի ազդեցություններ

Այո: Լուրջ կողմնակի ազդեցություններ կարող են լինել, սակայն դրանք շատ հազվադեպ են պատահում: Պատվաստանյութերի անվտանգության վերահսկման համակարգը հայտնաբերել է չորս լուրջ առողջական խնդիրներ, որոնք ներկայացված են ստորև: COVID-19-ի դեմ Pfizer, Moderna և Novavax պատվաստանյութերն այժմ խորհուրդ են տրվում J&J պատվաստանյութի փոխարեն:





COVID-19-ի դեմ պատվաստանյութեր. հաճախակի տրվող հարցեր ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՂՄԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դրա պատճառներից մեկն այն է, որ կան J&J պատվաստանյութի հետ կապված հազվադեպ, սակայն լուրջ կողմնակի ազդեցություններն: Պատվաստվելու դեպքում ստուգեք [Պատվաստման կողմնակի ազդեցությունները](#) կայքէջը՝ իմանալու համար հնարավոր ախտանիշների մասին, որպեսզի ուշադրություն դարձնեք դրանց:

- **Անաֆիլաքսիա:** Անաֆիլաքսիան հազվադեպ, սակայն լուրջ ալերգիկ հակազդեցություն է, որը կարող է առաջանալ դեղորայք ընդունելուց կամ ցանկացած պատվաստանյութ ստանալուց հետո: Եթե դա պատահի, բուժաշխատողները կարող են անմիջապես և արդյունավետ կերպով բուժել այդ հակազդեցությունը: Կարող են դրսևորվել նաև այլ՝ ավելի մեղմ ալերգիկ հակազդեցություններ: Իմացեք ավելին CDC-ի կայքէջում՝ [Ալերգիկ հակազդեցություններ COVID-19-ի դեմ պատվաստվելուց հետո](#):
- **Միոկարդիտ և պերիկարդիտ՝ Pfizer կամ Moderna պատվաստանյութով պատվաստվելուց հետո:** Միոկարդիտը սրտամկանի բորբոքումն է, իսկ պերիկարդիտը սրտապարկի բորբոքումն է: Միոկարդիտը և պերիկարդիտը COVID-19-ով վարակվելուց հետո հազվադեպ են պատահում: Միոկարդիտ և պերիկարդիտ ունեցող մարդկանց մեծ մասի առողջական վիճակը բարելավվում է դեղորայքի և հանգստի միջոցով, և նրանց ինքնազգացողությունը արագ կերպով լավանում է: Մարդիկ, որոնց մոտ դրսևորվում են այդ խնդիրները, սովորաբար կարող են վերադառնալ իրենց առօրյա գործունեությանը իրենց ախտանիշների բարելավվելուց հետո:

Pfizer and Moderna պատվաստանյութեր: Դեպքերի մեծ մասը արձանագրվել է պատվաստանյութի երկրորդ դեղաչափից հետո: Արական սեռի դեռահասները և պատանիները ավելի մեծ հավանականությամբ կունենան միոկարդիտ կամ պերիկարդիտ: Արձանագրվել է, որ 1-ին և 2-րդ դեղաչափերի միջև ընկած ժամանակահատվածի երկարաձգումը նվազեցնում է միոկարդիտի վտանգը: Սա պատճառներից մեկն է, թե ինչու է այժմ խորհուրդ տրվում, որ դեռահասները և պատանիները դիտարկեն երկրորդ դեղաչափի ընդունումը առաջին դեղաչափից 8 շաբաթ հետո: Միոկարդիտի վտանգը, ըստ երևույթին, ավելի ցածր է պատվաստանյութի խթանիչ դեղաչափի ընդունումից հետո, քան երկրորդ դեղաչափից հետո:

6 ամսականից 11 տարեկան երեխաները ստանում են դեղաչափի ավելի փոքր չափաբաժին, քան 12 տարեկան և ավելի բարձր տարիքի մարդիկ: CDC-ի կողմից վերջերս հրապարակված [գեկուլոցում](#) փաստում է, որ 6 ամսականից 5 տարեկան երեխաների շրջանում չի հայտնաբերվել միոկարդիտի վտանքի մեծացում COVID-19-ի դեմ պատվաստվելուց հետո: Համաձայն [CDC-ի կողմից հրապարակված հետազոտության](#)՝ 5-11 տարեկան երեխաներին մանկական Pfizer պատվաստանյութի մոտավորապես 8 միլիոն դեղաչափ ներարկելուց հետո արձանագրվել և հաստատվել է միոկարդիտի 11 դեպք: Այս դեպքերի մեծ մասը եղել են թեթև և արագ ապաքինվել են:

5 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց շրջանում անցկացված վերջին [ուսումնասիրությունը](#) ցույց է տվել, որ սրտի հետ կապված բարդացումների վտանգի հավանականությունը, ինչպես օրինակ՝ միոկարդիտի, պերիկարդիտի և բազմահամակարգային բորբոքային համախտանիշի (MIS-C), ավելի բարձր է եղել COVID-19-ով վարակվելուց հետո, քան Pfizer կամ Moderna պատվաստանյութերի մեկ կամ մի քանի





COVID-19-ի դեմ պատվաստանյութեր. հաճախակի տրվող հարցեր ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՂՄԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

դեղաչափեր ընդունելուց հետո: Այս տվյալները ստացվել են բոլոր տարիքի տղամարդկանց և կանանց շրջանում: Կարևոր է նաև նշել, որ պատվաստման հետ կապված միոկարդիտը ավելի մեղմ է և չի տևում այնքան երկար, որքան այլ պատճառներով առաջացող միոկարդիտը:

Novavax պատվաստանյութ: Միոկարդիտի և պերիկարդիտի դեպքեր են գրանցվել այն մարդկանց մոտ, որոնք ստացել են COVID-19-ի դեմ Novavax պատվաստանյութ: Novavax պատվաստանյութի 2-րդ դեղաչափը առաջինից 8 շաբաթ հետո ստանալը կարող է նվազեցնել այս հազվադեպ պատահող հիվանդությունների վտանգի հավանականությունը:

Կարևոր է նշել, որ COVID-19-ի *հիվանդությունը* առնչություն ունի կաթվածի, սուր կորոնար համախտանիշի, սրտամկանի ինֆարկտի (սրտի կաթված), սրտի անբավարարության, առիթմիայի (սրտի անկանոն զարկ), սրտի կանգի, ինչպես նաև միոկարդիտի և պերիկարդիտի հետ:

- **Թրոմբոցիտոպենիայի համախտանիշով թրոմբոզ (TTS)՝ J&J պատվաստանյութով պատվաստվելուց հետո:** TTS-ն հազվադեպ, սակայն լուրջ և երբեմն մահացու հիվանդություն է, որը կապված է արյան մակարոնուկների և թրոմբոցիտների ցածր քանակի հետ: *TTS-ն արձանագրվել է J&J պատվաստանյութով պատվաստված կանանց և տղամարդկանց տարիքային լայն շրջանակում:* 18-49 տարեկան կանայք հատկապես պետք է տեղեկացված լինեն այս բացասական հետևանքի հազվադեպ, սակայն ավելացած վտանգի մասին: Ավելին իմանալու համար այցելեք CDC-ի՝ [COVID-19-ի դեմ պատվաստման հետևանքով արձանագրված բացասական դեպքեր](#) կայքէջը:
- **Գիլեն-Բարեի համախտանիշ (GBS)՝ J&J պատվաստանյութով պատվաստվելուց հետո:** GBS-ն հազվադեպ խանգարում է, որի ժամանակ օրգանիզմի իմունային համակարգը վնասում է նյարդային բջիջները: Սա առաջացնում է մկանային թուլություն, իսկ երբեմն՝ կաթված: Մարդկանց մեծամասնությունը ամբողջովին ապաքինվում է GBS-ից, բայց որոշ դեպքերում այն մշտական վնաս է հասցնում նյարդերին: *GBS-ն արձանագրվել է J&J պատվաստանյութ ստացած մարդկանց մոտ:* Ավելի շատ դեպքեր արձանագրվել են հատկապես 50 տարեկան և ավելի բարձր տարիքի տղամարդկանց շրջանում: Գրեթե բոլոր մարդիկ հիվանդացել են պատվաստվելուց հետո 6 շաբաթվա ընթացքում: Մեծամասնությունը հիվանդացել է առաջին 3 շաբաթվա ընթացքում: Ավելին իմանալու համար այցելեք CDC-ի՝ [COVID-19-ի դեմ պատվաստման հետևանքով արձանագրված բացասական դեպքեր](#):

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք CDC-ի՝ [COVID-19-ի դեմ պատվաստման հետևանքով արձանագրված հատուկ բացասական դեպքեր](#) կայքէջ:

Այս պահի դրությամբ Միացյալ Նահանգներում կատարվել է COVID-19-ի դեմ ավելի քան 603 միլիոն դեղաչափ պատվաստում: Չնայած կարող են լինել կողմնակի ազդեցություններ՝ դրանք շատ հազվադեպ են պատահում: COVID-19-ի դեմ բոլոր դեղաչափերը ստանալու օգուտները գերազանցում են վտանգները:





COVID-19-ի դեմ պատվաստանյութեր. հաճախակի տրվող հարցեր ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՂՄԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարո՞ղ են COVID-19-ի դեմ պատվաստանյութերն ունենալ երկարատև կողմնակի ազդեցություններ

Ոչ: Երկարատև կողմնակի ազդեցությունները հավանական չեն: Հիմնվելով այն ամենի վրա, ինչ գիտենք մյուս պատվաստանյութերի մասին՝ երկարատև կողմնակի ազդեցությունները սովորաբար սկսում են դրսևորվել պատվաստվելուց հետո վեց շաբաթա ընթացքում: Այդ պատճառով, Մենդամթերթի և Դեղորայքի Վարչությունը (FDA) պահանջել էր, որ COVID-19-ի դեմ պատվաստանյութ արտադրող ընկերությունները հետևեն կլինիկական փորձարկումներին մասնակցող անձանց առողջական վիճակին առնվազն ութ շաբաթ: Եվ պատվաստանյութերի փորձարկումների մասնակիցների առողջական վիճակին շարունակում են հետևել, թեև պատվաստանյութերը թույլատրված/հաստատված են օգտագործման համար: Բացի այդ, CDC-ն շարունակում է ուշադիր հետևել COVID-19-ի դեմ պատվաստանյութերի ազդեցությանը դրանց թույլտվություն ստանալուց /հաստատվելուց և արտոնագրվելուց հետո: Անցել է մեկ տարուց ավել COVID-19-ի դեմ պատվաստանյութերի լայնորեն հասանելի դառնալուց հետո (և շատ ավելի երկար ժամանակ՝ պատվաստանյութերի փորձարկումների մեկնարկից հետո): Միլիոնավոր մարդիկ պատվաստվել են COVID 19-ի դեմ պատվաստանյութերով, և երկարատև կողմնակի ազդեցություններ չեն արձանագրվել:

Սրան հակառակ, մենք գիտենք, որ COVID-19-ի հարուցիչ վիրուսը կարող է առաջացնել որոշ երկարատև ազդեցություններ ինչպես մեծահասակների, այնպես էլ երեխաների մոտ: Օրինակ՝ որոշ մարդիկ կարող են COVID-19-ով վարակվելուց հետո ամիսներ շարունակ ունենալ այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են՝ չափազանց հոգևած զգալը, քնելու դժվարությունը, գլխացավերը և հևոցը, որոնք հաճախ դիտարկվում են որպես [երկարատև COVID](#): Ավելին, ծանր առողջական վիճակը, որը կոչվում է [բազմահամակարգային բորբոքային համախտանիշ](#), կարող է ազդել երեխաների (MIS-C) և չափահասների (MIS-A) առողջության վրա: Բազմահամակարգային բորբոքային համախտանիշը հազվադեպ պատահող, սակայն COVID-19-ի հետ կապված լուրջ հիվանդություն է, որի դեպքում մարմնի տարբեր մասերը բորբոքվում են, ներառյալ սիրտը, թոքերը, երիկամները, ուղեղը, մաշկը, աչքերը կամ աղեստամոքսային համակարգի օրգանները: Շատ հիվանդների անհրաժեշտ է լինում բուժվել հիվանդանոցում, իսկ որոշ դեպքերում, ցավոք, մարդիկ մահանում են: Պատվաստումը ստեղծում է պաշտպանվածություն վիրուսի այս «երկարատև» ազդեցություններից:

Եթե պատվաստվելուց հետո ինձ մոտ առաջանում է որևէ հակազդեցություն, ինչպե՞ս պետք է հայտնեմ այդ մասին

Եթե պատվաստումից հետո ձեզ մոտ լինում է բացասական հետևանք (հնարավոր կողմնակի ազդեցություն), նույնիսկ եթե վստահ չեք, որ այն առաջացել է պատվաստման հետևանքով, խնդրում ենք հաղորդել այդ մասին VAERS-ին: Պատվաստումների Բացասական Յետևանքների Մասին Հաղորդման Համակարգը (VAERS) վաղ նախագուշացման համակարգ է, որը FDA-ն և CDC-ն օգտագործում են՝ անվտանգության հետ կապված հնարավոր խնդիրները հայտնաբերելու համար: Հայտնելու համար զանգահարեք 1-800-822-7967 հեռախոսահամարով կամ այցելեք <https://vaers.hhs.gov/reportevent.html>:

Եթե դուք գրանցվել եք [V-Safe](#)-ում՝ CDC-ի՝ Պատվաստումից հետո առողջական վիճակը ստուգող համակարգում, կարող եք նաև հայտնել ձեր ախտանիշների մասին հեռախոսային (smart phone





COVID-19-ի դեմ պատվաստանյութեր. հաճախակի տրվող հարցեր ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՂՄԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

app) հավելվածի միջոցով:

Ոչ VAERS-ը, ոչ V-safe-ը չեն տրամադրում բժշկական խորհրդատվություն: Եթե ունեք ախտանիշներ կամ առողջական խնդիրներ, որոնք COVID-19-ի դեմ պատվաստվելուց հետո ցանկացած ժամանակ անհանգստացնում են ձեզ, կապ հաստատեք ձեզ առողջապահական ծառայություններ տրամադրողի հետ կամ դիմեք բուժօգնության:

Ի՞նչ են պարունակում պատվաստանյութերը

COVID-19-ի դեմ պատվաստանյութերի գրեթե բոլոր բաղադրիչները նաև շատ ուստիիքների բաղադրիչներ են՝ ճարպեր, շաքարներ և աղեր:

Բացի դրանցից՝

- COVID-19-ի դեմ Pfizer և Moderna պատվաստանյութերը պարունակում են տեղեկատվական կամ ինֆորմացիոն ՌՆԹ՝ իՌՆԹ (mRNA):
- COVID-19-ի դեմ Johnson & Johnson/Janssen պատվաստանյութը պարունակում է վիրուսի անվնաս տարբերակ, որը կապված չէ COVID-19-ի հարուցիչ վիրուսի հետ:
- COVID-19-ի դեմ Novavax պատվաստանյութը պարունակում է COVID-19 առաջացնող վիրուսի անվնաս մասնիկներ (սպիտակուցներ). սրանք հաճախ հասկ-սպիտակուց կոչվող սպիտակուցների մասնիկներն են:

Այս բաղադրիչները հրահանգներ են տալիս ձեր մարմնի բջիջներին՝ իմունային արձագանք ստեղծելու համար: Այս արձագանքն օգնում է պաշտպանել ձեզ ապագայում COVID-19-ով հիվանդանալուց: Իմունային արձագանք ստեղծելուց հետո մարմինը ազատվում է պատվաստանյութի բոլոր բաղադրիչներից, այնպես ինչպես այն կազատվեր բջիջներին այլևս ոչ անհրաժեշտ տեղեկատվությունից: Այս գործընթացը մարմնի բնականոն գործունեության մի մասն է:

Novavax-ը պարունակում է նաև «օժանդակիչ»՝ (“adjuvant”) ուժեղացնելու մարմնի իմունային արձագանքը: Օժանդակիչներ օգտագործվում են տարբեր պատվաստանյութերում:

COVID-19-ի դեմ պատվաստանյութերը ՉԵՆ պարունակում այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են՝ կոնսերվանտները (օրինակ՝ թիմերոզալ կամ սնդիկ), հյուսվածքները (օրինակ՝ ընդհատված պտղի բջիջներ կամ կենդանական որևէ նյութ), հակաբիոտիկները, սննդային սպիտակուցները (օրինակ՝ ձվի կամ ընկուզեղենի արտադրանք), դեղամիջոցները, լատեքսը կամ մետաղները:

Իմացեք ավելին այն մասին, թե ինչ բաղադրիչներ են պարունակում կամ չեն պարունակում COVID-19-ի դեմ [Pfizer](#), [Moderna](#), [Novavax](#), և [Johnson & Johnson](#) պատվաստանյութերը:

Կարո՞ղ եմ պատվաստանյութից վարակվել COVID-19-ով

Ոչ: Դուք պատվաստանյութից չեք կարող վարակվել COVID-19-ով: COVID-19-ի դեմ պատվաստանյութերից ոչ մեկը չի պարունակում COVID-19-ի հարուցիչ վիրուս: Երբեմն պատվաստվելուց հետո մեկ կամ օրկու օր մարդիկ ջերմություն են ունենում կամ հոգնածություն են զգում: Պատվաստման այդպիսի կողմնակի ազդեցությունները բնական են և նշան են, որ մարմինը ստեղծում է անվարակունակություն (immunity): Այդ ազդեցությունները պետք է





COVID-19-ի դեմ պատվաստանյութեր. հաճախակի տրվող հարցեր ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՂՄԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

անհետանան մի քանի օրվա ընթացքում:

Արդյո՞ք պատվաստման արդյունքում իմ COVID-19-ի թեստը դրական կլինի

Ոչ: Պատվաստանյութը պատճառ չի կարող լինել, որ COVID-19-ի ընթացիկ վարակ փնտրող ՊՇՌ (PCR) կամ հակազենի թեստերի (թթից կամ թթից սմուշով, ներառյալ՝ ինքնուրույն կատարվող) արդյունքները լինեն դրական: Յնարավոր է՝ ձեր թեստը դրական արդյունք ցույց տա հակամարմինների (արյան թեստ) որոշ թեստերի դեպքում: Դա պայմանավորված է նրանով, որ պատվաստանյութերը գործում են՝ սովորեցնելով ձեր մարմնին ստեղծել հակամարմիններ:

Տե՛ս հանրային առողջության թեստավորման ph.lacounty.gov/covidtests կայքէջը՝ COVID-19-ի թեստերի մասին ավելին իմանալու համար:

Կարո՞ղ եմ հղի, հղիանալ ցանկացող կամ կրծքով կերակրող մարդիկ պատվաստվել COVID-19-ի դեմ

Այո, COVID-19-ի դեմ պատվաստումը խորհուրդ է տրվում այն մարդկանց, ովքեր հղի են, կրծքով կերակրում են կամ այժմ փորձում են հղիանալ, ինչպես նաև այն մարդկանց, ովքեր կարող են հղիանալ ապագայում: Յղիության ընթացքում COVID-19-ով վարակված մարդիկ ավելի հավանական է, որ կունենան վաղաժամ ծննդաբերություն (37 շաբաթականից ավելի վաղ) կամ մահացած պտուղ, ինչպես նաև կարող են ունենալ հղիության այլ բարդություններ:

Յղիության ընթացքում COVID-19-ի դեմ պատվաստումն օգնում է կանխել ծանր հիվանդությունը և մահը հղի անձանց շրջանում և պաշտպանել 6 ամսականից փոքր երեխաներին հիվանդանոց ընկնելուց: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս [Պատվաստման վերաբերյալ ՅՏՅ-ներ. հղիություն, կրծքով կերակրում և վերադադրողականություն](#) և CDC-ի կայքէջը՝ [COVID-19-ի դեմ պատվաստումը հղիության կամ կրծքով կերակրման ընթացքում](#):

Կարո՞ղ եմ ալերգիա ունեցող մարդիկ պատվաստվել COVID-19-ի դեմ

Կախված է տարբեր հանգամանքներից.

- Մարդիկ, որոնք ալերգիա ունեն բերանով ընդունվող դեղամիջոցներից, սննդից (ներառյալ ձվից), լատեքսից, ընտանի կենդանիներից կամ ծաղկափոշուց, կամ այն մարդիկ, որոնք ունեն ընտանեկան ալերգիայի պատմություն, կարող են պատվաստվել:
- Եթե դուք ունեցել եք ալերգիկ հակազդեցություն պատվաստանյութից կամ ներարկումից, նույնիսկ եթե այն ծանր չի դրսևորվել, խորհրդակցեք ձեր բժշկի հետ՝ որոշելու, թե արդյոք անվտանգ է պատվաստվելը:
- Եթե ալերգիա ունեք պոլիէթիլենային գլիկոլից (PEG), ապա չպետք է պատվաստվեք Pfizer կամ Moderna պատվաստանյութերով: Յարգրեք ձեր բժշկին՝ արդյո՞ք կարող եք պատվաստվել J&J կամ Novavax պատվաստանյութով:
- Եթե ալերգիա ունեք պոլիսորբատից, ապա չպետք է պատվաստվեք Novavax կամ J&J պատվաստանյութերով: Յարգրեք ձեր բժշկին՝ արդյո՞ք կարող եք պատվաստվել Pfizer կամ Moderna պատվաստանյութերով:

Ցանկացած պատվաստանյութի դեպքում առկա է անաֆիլաքսիայի (ծանր ալերգիկ հակազդեցության տեսակ) փոքր վտանգ:





COVID-19-ի դեմ պատվաստանյութեր. հաճախակի տրվող հարցեր ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՂՄԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ալերգիկ հակազդեցությունների վերաբերյալ տեղեկությունները կարող են փոփոխվել: Ամենաթարմ ուղեցույցի համար մի՛ մոռացեք ստուգել CDC-ի [COVID-19-ի դեմ պատվաստանյութերն այերգիա ունեցող անձանց համար](#) կայքէջը և խոսել ձեր բժշկի հետ:

Որտեղի՞ց կարող եմ ստանալ լրացուցիչ տեղեկություններ



- Այս ՅՏՅ-ն կամ COVID-19-ի դեմ պատվաստման այլ թեմաների վերաբերյալ ՅՏՅ-ները տպելու կամ տեսնելու համար սկանավորեք QR ծածկագիրը կամ այցելեք [COVID-19 -ի դեմ պատվաստման ՅՏՅ-ները](#) կայքէջ:
- [VaccinateLACounty.com](#)` ներառյալ [COVID-19-ի դեմ պատվաստման ժամանակցույցը](#), որն աղյուսակներով ցույց է տալիս պատվաստման յուրաքանչյուր դեղաչափի ընդունման ժամանակը և տեղեկություններ է տրամադրում այն մասին, թե [ինչպես պատվաստվել](#):
- CDC-ի՝ [COVID-19-ի դեմ պատվաստանյութեր](#) կայքէջ:
- CDC-ի՝ [Միջեր և փաստեր COVID-19-ի դեմ պատվաստման վերաբերյալ](#) և [COVID-19-ի դեմ պատվաստման ՅՏՅ-ներ](#):
- Եթե հարցեր ունեք, խոսեք ձեր բժշկի հետ:

